ԳՐԻԳՈՐ ԵՊՍ. ԴԱՍԱՊԱՑԻ.— Մբ. կնիքը 1801, կը վախճանի 1827ին, իր տապանագիրն է հետևեալը «Տապան հանգստեան Ս. Աթոռոյս միաբան Դասապացի Գրիգոր արքեպիսկոպոսին որ հանգեաւ ի թ. ՌՄՀԶ (= 1827) Յուն «Ա.»ին»։

ԳՐԻԳՈՐ ԵՊՍ, ԵԳԻՊՏԱՑԻ.— Մբ. 1821ին, Առ. Եգիպտոսի։

ԳՐԻԳՈՐ ԵՊՍ. ԵՐՈՒՍԱՂԵՄԻ.— Մբ. 1652ին այցելու քարոզիչ Եթովպիոյ և Հնդկաց. իր մասին կը կարդանք Մեսրոպ Թաղիադեանցի Պտմ. Հ. Հնդ. (Գլ. Ե. էջ 220-25) գրքին մէջ. «... Ապա եկին ի Հնդիկս՝ ի Բաբելոնէ Յովհաննէս և Դանիէլ Նեստորականք. և յետ նոցա այլք. մինչև ց1652. ուր Գրիգոր Եպս. Երուսաղէմի չրջեալ քարոզութեամբ ընդ աշխարհն Եթովպիոյ մինչ ի Մուխա, եկն անդուստ ի Քոչին, և հաստատեաց զամենեսին ի դաւանութիւն Հայոց և Ասորւոց?։ Սա գրեաց առ մարզպանն Հայոց Մերուժէն. որ նստէր ի Տիգրանակերտ. և նա առաքեաց ի Հնդիկս զեպիսկոպոս մի ասորի երկու քորեպիսկոպոսօք, որոց եկեալ ի Քոչին. հովուեցին զեկեղեցին զամս հնգետասան.»։

ԳՐԻԳՈՐ ԵՊՍ. ԳԱՂԱՏԱՑԻ.— Առ. Սեբաստիոյ (1799-1807)։ Արմտանցի Յակոբ Եպս.էն յետոյ, 1799ին առաջնորդ կ'ընտրուի Սեբաստիոյ, երբ ուխտաւորութեամբ Ս. Յակոբի վանքը այցելութեան եկած էր։ Սեբաստիա հասնելով կը նորոգէ Ս. Նշան վանքը և Ս. Աստուածածին եկեղեցին. (Պ. Սեբաստիոյ. էջ 287)։ Գրիգոր Եպս. Սիմէոն կթղ.էն Եպս. կը ձեռնադրուի Ս. Էջմիածին. 1765ին, ախթարմայից քննութեան և աքսորի հրովարտակի գործադրութեան համար, Կարնեցի Սարգիս վրդ.ին հետ կը զրկուի 1765ին Ախլցխա. 1766ին Նա. Ս. Էջմիածնի, Գաղատիոյ մէջ (Դիւան. Գիրք Գ. 348-442). 1777ին կ'այցելէ Ս. Յակոբի վանքը. ուր սրբագրութեամբ ընդօրինակած է Սեր Աստուծոյ գիրքը. (թարգմ. Խարբերդցի Ղուկաս Վրդ.ի). կը նշանակուի Նա. Ս. Յակոբի վանքին, 1784ին Ռումելիի կողմերուն, 1789ին Հալէպի, 1791-94ին Եդեսիոյ. 1795ին կուզայ դարձեալ Ս. Յակոբի վանքը, (Հայ Անկիւրիա անտիպ)։ Դանիէլ կթղ.ի օծման կը մասնակցի Եբեքխորան եկեղեցիին մէջ 1802ին։ Առ. Գաղատիոյ 1807ին, կը վախճանի Սպարդա և կը թաղուի Միզիթրա քաղաքը 7 դեկտ. 1810ին (Պ. Սեբաստիոյ. էջ 290, Հա. 1911)։